

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Իրավաբանական վարչության իրավական ապահովման և պայմանագրային բաժնի առաջատար մասնագետ (30-3.2-144)

Առաջատար մասնագետը՝

- Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է Նախարարի նորմատիվ և անհատական, ինչպես նաև Աշխատակազմի ղեկավարի անհատական և ներքին հրամանների նախագծեր.

- մասնակցում է Նախարարության և Աշխատակազմի գործունեության ոլորտի իրավական աջակցության հետ կապված աշխատանքներին, վարչական վարույթի վերաբերյալ գործերի քննարկմանը, դրանց պատասխանների նախապատրաստմանը.

- Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համակարգում գործող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություններին, Նախարարություն ներկայացվող կոնկրետ որոշումների նախագծերի վերաբերյալ իրավական-փորձագիտական եզրակացությունների կազմման աշխատանքներին.

- Բաժնի պետի հանձնարարությամբ տրամադրում է քաղաքացիաիրավական պայմանագրերի նախագծերի վերաբերյալ իրավական եզրակացություններ.

- Բաժնի պետի հանձնարարությամբ որպես նախարարության ներկայացուցիչ հանդես է գալիս դատական մարմիններում, ինչպես նաև մասնակցում է կազմակերպությունների լուծարման և մասնավորեցման նախապատրաստական գործընթացներին.

- իրականացնում է նախարարության պայմանագրերի բնօրինակների հաշվառման և գրանցման աշխատանքները..

- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

- «Իրավական ակտերի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձի չափը՝ 150 799 (հարյուր հիսուն հազար յոթ հարյուր ինսունինը) ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
 - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 22.08.2018թ.